ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

- Վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1) 224/2 սենյակ
- Օրը՝ 20.12.2017թ.
- Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մ.Հայրապետյան	
Հանձնաժողովի անդամներ՝	Ք.Համբարձումյան	
	Ռ.Կարապետյան	
	Մ.Նավասարդյան	
	Լ.Անտոնյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Վարդանյան	

1. Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման վերաբերյալ

(Մ.Հայրապետյան)

Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 19.12.2017 թվականին կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/44 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դադարեցնել 13.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով կայացված «Ֆոտոն» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և սույն որոշումից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց

(Մ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps.am/epps համակարգով վերագնահատել մրցույթը, մերժել «Ֆոտոն» ՍՊ և «Դեագա» ՍՊ ընկերությունների հայտերը (հայտի ապահովումը հավասար չէ գնային առաջարկի 5 տոկոսին), ինչպես նաև մերժել «Նորք-7» և «Էլաամոդա» ՍՊ ընկերությունների համատեղ հայտը (խախտվել է Հրավերի I մասի 4-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակի վերաբերյալ պահանջը): Գնահատման հաշվետվության (Evaluation) բեռնումից հետո միայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0